ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2021-2023թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (օգոստոս ամսվա վերջի դրությամբ)













2023թ օգոստոսի 31-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 395,1 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 5 %-ով, 2022թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 8.7 %-ով, իսկ 2021 թվականի օգոստոսի 31-ի նկատմամբ՝ նվազելով՝ 0.5 %-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 185.6 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022 թվականի դեկտեմբերի 31-ի նկատմամբ, 5.4 %-ով, 2022թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 9.4%-ով, իսկ 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ նվազելով՝ 0.03 %-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 209.5 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.5 %-ով, 2022թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 4.2%-ով, իսկ 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 9.2 %-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 11 մլրդ 386.9 մլն ԱՄՆ դոլար աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 7 %-ով, 2022թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 14 %-ով, իսկ 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 27.2 %-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 10 մլրդ 844.1 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 7.5%-ով, 2022 թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 14.7 %-ով, իսկ 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 27.2 %-ով,

6)ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 542.8 մլն. ԱՄՆ դոլար նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.5%-ով, 2022թ օգոստոսի 31-ի նկատմամբ աճելով 0.4%-ով, իսկ 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 16 %-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 349.9 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.3%-ով, 2022թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 1 %-ով, իսկ 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ նվազելով 23 %-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրիլիոն 835,7 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 11,2%-ով, 2022թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 22.,4 %-ով, իսկ 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 61.7 %-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 209.5 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.5 %-ով, 2022թ. օգոստոսի 31-ի նկատմամբ 4.2 %-ով, իսկ 2021թ.օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 9.2 %-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 6մլրդ 88 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 3.3 %-ով, 2022թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 5.9 %-ով, իսկ 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ նվազելով՝ 1.5 %-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 4 մլրդ 756.1 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 13.4 %-ով, 2022թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 28.4 %-ով, իսկ 2021թ օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 106.8 %-ով,

12) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 542.8 մլն ԱՄՆ դոլար նվազելով՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.5 %-ով, 2022թ. օգոստոսի 31-ի նկատմամբ աճելով 0.4 %-ով, իսկ 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 16 %-ով:

ԱԺԲԳ













ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2023թ. օգոստոսի 31-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 468.5 մլն ԱՄՆ դոլար նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.8 %-ով, 2022թ.-ի օգոստոսի 31-ի նկատմամբ՝ աճելով 5.6 %-ով, իսկ 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ նվազելով1 %-ով:

2023թ. օգոստոսի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 79.01 %, ինչը ավել է 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 1.39 տոկոսային կետով, 2022թ. օգոստոսի 31-ի ցուցանիշից պակաս է 0.25 տոկոսային կետով, 2021թ. օգոստոսի 31-ի ցուցանիշից ավել՝1.28 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 20.71%, ինչը պակաս է 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ 1.37 տոկոսային կետով, 2022թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ՝ ավել 0,29 տոկոսային կետով, իսկ 2021 թ, օգոստոսի 31-ի համեմատությամբ՝ պակաս1.18 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.28%, ինչը 0,02 տոկոսային կետով պակաս է 2022 դեկտեմբերի 31-ի ցուցանիշից, 2022թ. օգոստոսի 31-ի ցուցանիշից պակաս է 0.04 տոկոսային կետով, իսկ 2021թ. օգոստոսի 31-ի ցուցանիշից պակաս է 0.12 տոկոսային կետով:

2023թ. հունվար-օգոստոսին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝

1) տոկոսավճարները կազմել են 136.11 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 25.33 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 31.95 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 77.42 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 13.39 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 19.57 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 58.69 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 11.95 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 12.38մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ




Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ




ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար




ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար




2023թ. հունվար-օգոստոսին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 240.64 մլրդ դրամ, ինչը ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 89.47 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 229.15 մլրդ դրամով:

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 252.59 մլրդ դրամ, ինչը ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 93.9 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 119.66 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է -11.95 մլրդ դրամ, ինչը պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 4.43 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 348.81 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2023թ. հունվար-օգոստոսին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 95.50 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 105.2 %-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 97.1%-ով,

2) արտաքին վարկերի մարման նպատակով վճարվել է 193.33 մլն դոլարի մայր գումար, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 28.3%-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 26.6 %-ով,

3) ստացվել են 164.36 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 25.7%-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է՝ 126.9 %-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման և մարման նպատակով վճարվել է 288.83 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 46.5 %-ով, իսկ 2021 թ, ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 100.6 %-ով:

ԱԺԲԳ

## Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ




## Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր




## ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %




## ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %




2023թ. օգոստոսի31-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 776.3 մլրդ դրամ, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի, 2022թ. օգոստոսի 31-ի և 2021թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 280, 378.2 և 683.7 մլրդ դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3011 օր, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 193 օրով, 2022թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ պակաս է 494 օրով, իսկ 2021թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ պակաս է 991 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2023թ. օգոստոսի 31-ի դրությամբ կազմել է 6.93 %, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավել է 0.72 տոկոսային կետով, 2022թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ ավել է 1.15 տոկոսային կետով, իսկ 2021թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ ավել է 2.41 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2023թ. օգոստոսի 31-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 3.32 %, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի, 2022թ. օգոստոսի 31-ի և 2021թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ համապատասխանաբար մեծ է 0.7 , 1.76 և 2.29 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 15.16 %, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 2.11 տոկոսային կետով, 2022թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ՝ 3.15 տոկոսային կետով, իսկ 2021թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ՝ մեծ է 7.83 տոկոսային կետով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 81.52 %, ինչը 2022թ . դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 2.81 տոկոսային կետով, 2022թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ՝ 4.91 տոկոսային կետով, իսկ 2021թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ՝ 10.12 տոկոսային կետով:

ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ
# ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2023-2025 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2021-2023թթ. օգոստոս ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի




Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %




ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %




ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %




ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2023-2025թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 7-10 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2023թ օգոստոսի31-ի դրությամբ կազմել է 7.4 տարի: Այս ցուցանիշը 2022թ. օգոստոսի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.7 տարով, իսկ 2021թ. օգոստոսի 31 -ի ցուցանիշից՝ 1.3 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2023թ. օգոստոսի 31-ի դրությամբ կազմել է 15.2 %, որը 2022թ. օգոստոսի 31-ի և 2021թ. օգոստոսի 31-ի մակարդակներից մեծ է համապատասխանաբար՝ 5,5 և 4,2 տոկոսային կետերով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2023թ.օգոստոսի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 83.7%, լողացող տոկոսադրույքով՝ 16.3%: Ընդ որում, 2023թ. օգոստոսի 31-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2022թ. օգոստոսի 31-ի ցուցանիշից պակաս է 0.01 տոկոսային կետով, իսկ 2021թ. օգոստոսի 31-ի ցուցանիշից ավել է 1.1 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 30%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2023թ. օգոստոսի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 56,1%, ներքին պարտք՝ 43.9 %: Ընդ որում, 2023թ. օգոստոսի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2022թ. օգոստոսի 31-ի և 2021թ. օգոստոսի 31-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 4.7 և 16.8 տոկոսային կետերով: